

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Վիճակագրական ծրագրերը մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Արմստատ) «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14, 15 և 16-րդ հոդվածների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների հնգամյա վիճակագրական ծրագրով» (այսուհետ՝ Հնգամյա ծրագիր) սահմանված պահանջներին համապատասխան, մշակել է «2020 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը (այսուհետ՝ Տարեկան ծրագրի նախագիծ):

**Հնգամյա և Տարեկան ծրագրերը** մշակվում են որպես արդյունավետ ռազմավարական և օպերատիվ կառավարման ու համակարգման առանցքային գործիքներ՝ ողջ ազգային վիճակագրական համակարգի համար: Արմստատը պատասխանատու է վիճակագրական ծրագրեր կազմելու համար՝ սերտորեն համագործակցելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների, օգտագործողների, ռեսպոնդենտների և վարչական տվյալներ տրամադրողների հետ:

**Հնգամյա ծրագիրը** մշակվում է ազգային վիճակագրական համակարգի համար և սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացման ուղղություններն օգտագործողների ընթացիկ և զարգացող կարիքները բավարարելու նպատակով: Այն սահմանում է նաև ազգային վիճակագրական համակարգի հայեցակարգային մոտեցումները և զարգացման գերակա ուղղությունները:

Ազգային վիճակագրական համակարգի **Տարեկան** ծրագիրը հիմնվում է տվյալ ժամանակաշրջանը ներառող **Հնգամյա** ծրագրի վրա և մշակվում է յուրաքանչյուր տարի պաշտոնական վիճակագրության արտադրողների ցանկի նորացման և ստորն թվարկվածի համար իրավական հիմք ապահովելու նպատակով ու ներառում է.

- ✓ տարածման ենթակա ողջ պաշտոնական վիճակագրությունը,
- ✓ պաշտոնական վիճակագրություն արտադրողների կողմից իրականացվելիք վիճակագրական հետազոտությունները,
- ✓ պաշտոնական վիճակագրություն արտադրողներին վարչական տվյալների կամ այլ աղբյուրների տվյալների տրամադրման բոլոր դեպքերը,
- ✓ պաշտոնական վիճակագրության հիմնական մշակումները,
- ✓ վիճակագրական ռեգիստրների վարման և մշակման միջոցառումները:

**Տարեկան** ծրագիրը պարունակում է տարածման ենթակա ողջ պաշտոնական վիճակագրության ցանկը՝ ըստ յուրաքանչյուր արտադրողի, տեսակների և հաճախակա-նության:

**Տարեկան** ծրագիրը ներառում է պաշտոնական վիճակագրության արտադրողների կողմից իրականացվելիք բոլոր վիճակագրական հետազոտությունների նկարագրություն-ները և յուրաքանչյուր հետազոտության համար տվյալների հավաքման մեթոդները, ռեսպոնդենտների ընդգրկվածության աստիճանը, ռեսպոնդենտների մասնակցության պարտադիր կամ կամավոր բնույթը, ինչպես նաև վիճակագրության այն տեսակի կամ վիճակագրական ռեգիստրների թվարկումը, որոնց համար հետազոտությունը կապահովի անհրաժեշտ տեղեկատվության ստացում:

**Տարեկան** ծրագիրը պարունակում է պաշտոնական վիճակագրություն արտադրող-ներին տրամադրվող վարչական տվյալների բոլոր հավաքածուների ցանկը՝ ըստ անվա-նումների, դրանց տրամադրողների, դրանք ստացող պաշտոնական վիճակագրություն արտադրողների վիճակագրության կամ վիճակագրական ռեգիստրների տեսակների, որոնց տրամադրվելու է այդ տեղեկատվությունը, ինչպես նաև այդ տվյալների տրամադրման հաճախականությունը և վիճակագրական միավորների տեսակը: Տարեկան ծրագրում տվյալ տեղեկատվության փոխարեն կարող է ներառվել հղում փոխըմբռնման հուշագրի կամ ցանկացած այլ համաձայնագրի, որը կարգավորում է վարչական տվյալների տրամադրումը պաշտոնական վիճակագրություն արտադրողներին և պարունակում է անհրաժեշտ տեղեկատվություն ու հանրամատչելի է:

**Տարեկան** ծրագիրը պարունակում է տեղեկատվություն նախորդ տարիներին սկսված և տվյալ տարվա մասով շարունակական մշակումների վերաբերյալ:

**Տարեկան** ծրագրում թվարկվում են բոլոր առկա և տվյալ տարվա ընթացքում ստեղծելիք վիճակագրական ռեգիստրները:

Արմստատը **Հնգամյա** և **Տարեկան** ծրագրերի նախագծերը տեղադրում է իր պաշտոնական կայքում՝ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների առաջարկությունները և դիտողությունները ստանալու նպատակով: Ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակված նախագծերը ներկայացվում են Հանրային խորհուրդ՝ կարծիքի:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից է օգտագործողներին շուկայի պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանքի տրամադրումը:

Պաշտոնական վիճակագրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներից են.

- միջազգային չափանիշներով վիճակագրական մեթոդաբանության կատարելագործման, միասնականացման և ներդաշնակեցման, այլ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող իրենց երկրների սոցիալ-տնտեսական վիճակին և բնակչության կենսապայմաններին վերաբերող ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով՝ Արմստատի շարունակական գործունեությունը միջազգային համագործակցության շրջանակում,
- վիճակագրության համակարգային զարգացման համար նախադրյալների ապահովման, վիճակագրության մեթոդաբանական կարողությունների զարգացման և կանոնակարգման, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման նպատակով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտով սահմանված ցուցանիշների և դրանց մեթատվյալների պարբերական արդիականացման աշխատանքների ապահովումը,
- Արմստատում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցությունները և դասընթացները, ինչպես օտարերկրյա փորձագետների, այնպես էլ Արմստատի աշխատակիցների դասավանդմամբ և (կամ) մասնակցությամբ,
- պաշտոնական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման բնագավառներում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը, արդիականացումը և կիրառումը (մեթատվյալներ, տվյալների հիմնապաշար, ծրագրային փաթեթներ և այլն),
- Արմստատի պաշտոնական կայքում տեղադրված հրապարակումների տեղեկատվական բազայի կատարելագործումը, վիճակագրական տեղեկատվության օգտագործողների համար առցանց ռեժիմով ամփոփ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը,

- պաշտոնական վիճակագրությունում վիճակագրական դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաև արդեն իսկ ներդրված ու կիրառվող վիճակագրական դասակարգիչների շարունակական կատարելագործման աշխատանքների ապահովումը:

Վիճակագրական տեղեկությունների հավաքման արդյունավետության բարձրացման (ինչպես տվյալների որակի, այնպես էլ ռեսուրսների խնայողության ենթատեքստով), ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական դիտարկման փաստաթղթերով ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով՝

- փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներից ընտրանքային կարգով վիճակագրական տեղեկությունների հավաքման մեթոդների ավելի լայն կիրառումը,
- Վիճակագրական կոմիտեին տրամադրման ենթակա վիճակագրական փաստաթղթերի (վիճակագրական հաշվետվությունների, հետազոտությունների հարցաթերթերի և այլն) միջոցով, որոնք ներառում են վիճակագրական տվյալների ծավալը, ներկայացնելու հասցեներն ու ժամկետները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների գործունեության վերաբերյալ այլ տվյալներ,
- տնտեսական գործունեության տեսակների ու դրանք իրականացնող սուբյեկտների քանակի աճով պայմանավորված, վարչական ռեգիստրների և կիրառվող մեթոդաբանությունների շարունակական կատարելագործման աշխատանքները,


Վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով.

- երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվությունը տարածվում է՝ հասանելի դառնալով բազմաթիվ օգտագործողների համար (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպություններ, գործարար համայնք, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն), այդ թվում՝ մամուլի հաղորդագրությունների տեսքով՝ համաձայն Ծրագրի Մաս 3-ում նշված ժամանակացույցի,
- Արմատատի պաշտոնական կայքում հայերեն, ռուսերեն և (կամ) անգլերեն գետեղվում է վիճակագրական ողջ տեղեկատվությունը:

Արմատատն ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան վիճակագրական տեղեկատվության տրամադրումը միջազգային (միջպետական, միջկառավարական) կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում ձեռքբերված պայմանավորվածությունների հիման վրա՝ նոր հետազոտությունների և այլ վիճակագրական աշխատանքների իրականացումը:

**Ծրագրում** ներառված աշխատանքների (ցուցանիշների) կառուցվածքը ներկայացված է համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (որին 2003 թվականի նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) բաղադրիչների և ենթադրում է տվյալների տարածման հետևյալ 4 հիմնական պահանջների (չափորոշիչների) պահպանումը՝ տվյալների ընդգրկվածություն, հաճախականություն և ժամանակայնություն, մատչելիություն, ամբողջականություն ու որակ:

**Ծրագրի 1 և 11-րդ Մասերում** աշխատանքների (ցուցանիշների) արտացոլման համար օգտագործվել է վեցանիշ ծածկագիր, որտեղ.



- **I նիշը**՝ աշխատանքի (ցուցանիշի) ծածկագիրն է ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի հատվածների,
- **II նիշը**՝ հատվածի տրոհումն է ըստ ենթահատվածների,
- **III նիշը**՝ աշխատանքի (ցուցանիշի) տրոհումն է ըստ ոլորտների (Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի դասերի, ցուցանիշների),
- **IV նիշը**՝ ոլորտների մանրամասնացումն է ըստ ենթաոլորտների:

**Հաջորդ 2 նիշերը** հատկացված են վիճակագրական աշխատանքների հերթական համարին՝ ըստ տվյալ հատվածի, ենթահատվածի, ոլորտի և ենթաոլորտի:

Այն դեպքում, երբ աշխատանքը (ցուցանիշը) տվյալ մակարդակից ներքև չի տրոհվում՝ հաջորդող դիրքերը լրացվում են զրոներով:

Օրինակ՝ Մաս 1-ի 127001 - ծածկագիրը նշանակում է իրական հատվածի (1), արտադրության ենթահատվածի (2), կազմակերպությունների տնտեսական գործունեության (7), կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները (0), իսկ վերջին երկու նիշերն արտահայտում են նշված ցուցանիշներին առնչվող վիճակագրական աշխատանքների ցանկում հերթական համարը, որոնք անփոփոխելի են:

Տվյալ ծածկագրի համար Մաս 1-ում նշվում են նաև.

- սյունակ 3՝ վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) ամբողջական անվանումը,
- սյունակ 4՝ վիճակագրական փաստաթղթի տեսակը կամ աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) համար հիմք հանդիսացող այլ նյութերը (աղբյուրները),
- սյունակ 5՝ ընդգրկվածությունը (ըստ ոլորտի, գործունեության տեսակի, տարածքային բաշխվածության, աշխատողների թվաքանակի և այլն),
- հաճախականությունը (սյունակ 6),
- սյունակ 7՝ աշխատանքի (ցուցանիշի) կատարման (մշակման) ավարտը (ամսաթիվը կամ օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո),
- սյունակ 8՝ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքերում առկա վիճակագրական հրապարակումներն ըստ ծածկագրերի (տես՝ Մաս 3), տվյալների բազաներն ըստ հղումների և այլն, որոնցում առկա է վիճակագրական աշխատանքի արդյունքը (ցուցանիշը):

**Ծրագրի 3 և 10** Մասերում վիճակագրական հրապարակումների համար օգտագործվել է 7-անիշ ծածկագիր, որտեղ I-IV նիշերը համապատասխանում են Ծրագրի 1-ին Մասի դասակարգմանը, V նիշը ներկայացնում է հրապարակման ծածկագիրը (մասնավորապես՝ վիճակագրական ժողովածու (1), վիճակագրական տեղեկագիր (2), մամուլի հաղորդագրություն (3), տեղեկատվական ամսական զեկույց (4), վիճակագրական զեկույց (5)), իսկ VI և VII նիշերը ցույց են տալիս դրանց հերթական համարը:

**Ծրագրի 11-րդ** Մասում ներկայացված վիճակագրական աշխատանքներում (ցուցանիշներում) արտացոլված են նաև այն աշխատանքները (ցուցանիշները), որոնց կատարումն ըստ էության, Արմատատի մարզային և Երևան քաղաքի վարչությունների կողմից տվյալների հավաքումն է և ամփոփումը: Այդ առումով, վերոհիշյալ Մասում առկա են Մաս 1-ի աշխատանքների (ցուցանիշների) կրկնություններ՝ ըստ Արմատատի մարզային և Երևան քաղաքի վարչությունների կողմից դրանց կատարման բովանդակային և ժամկետային պարտավորությունների մանրամասնումներ:

Վիճակագրական աշխատանքների կատարման (ցուցանիշների մշակման) **Ծրագրում** սահմանված ավարտի օրերը պարունակում են որոշակի վերապահումներ, կախված տարվա օրացուցային օրերի աշխատանքային օրերին համընկնելու հանգամանքից (օրինակ՝ Մաս 1-ում 1.Իրական հատվածի 1.2. Արտադրություն (ծառայություններ) ենթահատվածի 1.2.3.Շինարարություն բաժնի 123004 ծածկագրով վիճակագրական աշխատանքի ավարտի օրը սահմանված է հաշվետու ժամանակաշրջանից հետո 25-րդ օրը):

**Եթե որևէ աշխատանքի ավարտի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա աշխատանքի ավարտի օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը:**